Դ. Գծագրութիւն և երկրաչափութիւն բաները, Հայերէն դասերի թւերում չորս կամ հօթը և առաջին կամ վերջին դասերը լինելը իմանալու կամ ճիշդ կարդալու չափ ընդունակութիւն ունեմ, բայց եթէ ձեր նախագծից և ազիւսակից վաւերացեալ պատճէններ հետս չը վերցրի, այդ մասին ներող գտնվեցէք իմ միամտութեան վրա, ինչպէս ես ներողամիտ եմ ձեր ձևապահական թէկուզ... տասխտութեան վրա։ Ազիւսակի մէջ երգի դասեր լինելն էլ թող դոցա կարգը անցնի։ Եւ վերջապէս ինչի՞ էք վախենում երկրաչափութիւնից, ութ տարուայ մէջ կարելի է մի ուսումնարանում ոչ թէ երկրաչափութիւն, այլ ուրիշ շատ «ութիւններ» էլ սովորեցնել։

Ե. Ձեր ուսուցչական գործունէութեան արդիւնաւորութեան մասին պ.պ. տեսուչներից ստացած «խրախուսական շնորհակալագրի» արդարութեան մասին, ես կասկած չունիմ, որովհետև այդ պարոն տեսուչներից մէկին, պարոն Պախալովին ես լաւ եմ ճանաչում։

Զ. Եթէ ձեր դպրոցից դուրս եկող աշակերտները կարողանում են Ալէքսանդրօպօլի տեղական արքունի ուսումնարանի մինչև երրորդ դասատունը մտնել, այդ պատիւը (եթէ միայն դա պատիւ է) չի վերաբերի ձեր ուսումնարանին, այլ այդ արքունի ուսումնարանին։

Է. Տեղույս ազգային ծխական դպրոցները ես չեմ գովել։ Եթէ իմ միտքս պարզ հասկացել էք, ես այդ դպրոցների վրա նայել էի և նայում եմ որպէս ժողովրդական, պատմական հիմնարկութիւնների վրա։ Իսկ ձեր դպրոցը իր ուղղութիւնով, մի մանկավարժական հրէշ երևացաւ իմ աչքին։ Կարելի է ես սխալվում եմ, բայց հաւատացնում եմ ձեզ, այդ գաղափարը ինձ մէջ ծնեցնողը չէ և չէ կարող լինել կիրքը կամ անձնականութիւնը։

Ը. Իմ կենսագրական մի քանի գծերիդ սուտութիւնների մասին շնորհակալ եմ։ Երևում է որ ուսումնարան կառավարելուց աւելի ֆելիետոններ գրելու ձիրք էք ունեցել։

Ախալցխա Յ. Դիզամեանց

ՆԱՄԱԿ ԲԱՇ-ՇՈՐԱԳԵԱԼԻՑ

—

Օգոստոսի 24

Ամսիս 17-ին բաղդ ունեցանք դանվել Դօշավանքումը, որի մասին աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել։ Դեռ ևս երեք վերստ հեռաւորութեամբ վանքի հիւսիսային կողմը բարձր քարափի գլխին կանգնած երևում են երկու բարձրադիտակ շինութիւններ, որոնք անմիջապէս բաժանված են իրարից երկու սրածայր գագաթներով. հեռուից անծանօթ ճանապարհորդին ներկայանում են ինչպէս երկու կենդանի պահապաններ, որոնք լուռ ու մունջ գիշեր ու ցերեկ հսկում են մի արքայական գանձարանի վրա, որը նրանց քամակի ետևը խուլ ձորակի մէջ պահված է շատ դարերից ի վեր։

Սիրելի ընթերցող, եթէ քեզ կը յաջողվի մի օր անցկենալ այդ տխուր պատկերների մօտից, խորհրդաւոր մօտեցիր նրանց, և դու կը լսես նրանց անմռունչ քարերի բերանից այն խորհրդաւոր արձագանքը, թէ «շտապիր դէպի առաջ, դէպի ցած այդ ձորակը, ով հայ ճանապարհորդ, այն տեղ են քո երջանիկ նախնեաց զօրեղ ձեռքերի հրաշալիքը այն տեղ են ամփոփված նրանց խնկելի ոսկորները տխուր դամբարանների տակ, որոնց վաղեմի չքնաղ մենաստանները իրենց կիսաւեր դրութեամբ ողբ պիտի կարդան քեզ հետ նրանց շիրիմների վրա։

Այդ տեղից մի քանի քայլ առաջ ձորակի մէջ բացվում է երեք կողմից բարձր քարափներով շրջապատած մի փոքրիկ տարածութիւն որի — միջնավայրում գտնվում է «սուրբ Ցոլքմնէկ» անուանեալ մենաստանը. որ համեմատաբար իր կենդանի միացորդներով և կանգուն դրութեամբ որոշվում է այն բազմաթիւ աւերակներից, որոնք թափված են նրա չորս կողմը ողբալի դրութեան մէջ։ Այդ մենաստանը իբրև մայր կարծես նայում է իր շրջապատող աւերակների վրա, որ անկարող պահպանել նրանց սրբագործ քարերը, բայց աւաղ. մարդկային աւերիչ ձեռքերը յաղթական են նրանց ստորոտը։

Դորա հարաւային կողմից դարձուրելի ձորակի միջով մանչելով գնում է Ախուրեան գետը, որ բաղադրված է զանազան ջրերից. օձապտոյտ ընթացքով հասնելով հանդիպում է Անիի աւերակներին և այնտեղից անմխիթար և վշտոտ ձայնով հեռանում է դէպի օտար աշխարհ։ Վերջապէս այդ վանքի չորս կողմը, ուր որ նկատում ես, լիքն են զանազան շինութիւններով և քայքայված վանքերով։ Ես հրաժարվում եմ իմ տկար գրչով բաւականութիւն տալու սիրելի ընթերցողիս այդ պաշտելի հնութիւնների նկարագրութիւններով, միայն այսքանը կարող եմ ասել, թէ այսօր մի նշանաւոր օր էր երևում այդ սրբավայրերի համար։ «Սուրբ Ցոլքմնէկս» վանքի պարսպի ներս ու դուրսը այսօր լիքն էին մարդկանց բազմութիւնով։ Գիւղական պարզամիտ ժողովուրդը խումբ խումբ հաւաքված էին պատերի տակ և անհամբեր սպասում էին պատարագի զանգակահարութեանը։ Կանայք, հարսներ և օրիորդներ — շատ շատ մտնում էին վանքը, և այնտեղից դուրս էին գալիս երեսները խաչակնքելով։ Դրանք են մեր ջերմեռանդ ուխտաւորները, որոնք տակաւին ամուր պաշելով իրենց սրտի մէջ վերջին դարերի ժառանգական աւանդութիւնները, ամեն նաւակատիկի, ամեն նշանաւոր օր ուխտ են գնում այսպիսի սրբավայրերում։

Պատարագի զանգակները խփեցին. բազմութիւնը դիմեց դէպի վանքը. իւրաքանչիւրը շտապում էր իր համար մի յարմարաւոր տեղ գտնել, որ աւելի լաւ կարողանայ նկատել, թէ ինչպէս են ձեռնադրվում քահանայացու սարկաւագները, որոնք նոյն ժամուն կանգնած բեմի առաջ սպասում էին խարտավլակի առաջնորդելուն (որ էր Բայէնդուրցի տէր-Մելքիսեդեկը)։ Բազմութիւնը հետզհետէ աւելի խտանում էր, և դպիրների դասը արդէն լցված էր զանազան ձայնագրաւէտ տիրացուներով և քահանաներով։ Սրբազան խորհուրդը կատարողն էր Աղուանեան Գ. Գրիգորիս եպիսկոպոսը, որ նոյն րոպէին զգեստաւորած դուրս եկաւ սեղանի առաջ։ Պատարագը սկսվեց։ Երգեցիկ տիրացուները շարունակեցին մեղեդին ներդաշնակաւոր ձայնով։ Պատարագը րոպէ րոպէ ընդհատվում էր և կարդացվում էր ձեռնադրութեան վերաբերեալ աղօթքները բարձր և ազդեցիկ արտասանութեամբ։ Երգերի մրմունջ և սրտառուչ ձայները, վանքի քարերի տխուր արձագանքը միախառնված իրարու հետ ներգործում էին լսողի վրա մի ցաւալի տպաւորութիւն։ Վերջապէս ձեռնադրութեան ընդհանուր խորհուրդը աւարտվելուց յետոյ, սրբազան հայրիկը մի քանի կարևոր խօսքերով բացատրեց նրանց քահանայութեան ծանրակշիռ պարտականութիւնը դէպի իրենց ժողովուրդը, դէպի եկեղեցին, դէպի ազգութիւնը, ասելով «պէտք է ամենայն խոհեմութեամբ և անարատ քահանայութեամբ հսկել այս հարստահարված գիւղական խեղճ ժողովրդի վրա. պէտք է առաջնորդել նրանց դէպի ուսումն ու գիտութիւն», աւելացնելով և այն թէ «դուք այսուհետև ժողովրդին հայր կոչվելու իրաւունք ունիք, պէտք է ցոյց տաք ձեր հայրական նշանակութիւնը աւելի գործով, քան թէ լոկ կոչումով։ Դուք այն ժամանակ միայն կարող էք արժանապէս վայելել հայրութեան պատիւը, երբ կունենաք ձեր ժողովրդի մէջ ուսումնասէր զաւակներ։ Դուք էք երկրի աղը։»

Պատարագը արձակվեցաւ։ Այդ միջոցին հիւրանոցի դռներում կարելի էր նկատել՝ մի քանի հատ ձայնագրաւէտ տիրացուներ, որոնք տէր-Մելքիսեդեկ հօր հրաւիրանօք եկած էին վարժապետներ լինելու համար զանազան տեղերում։ Դրանցից մի քանիսը իբրև արժանաւորներ այդ պաշտօնին, յիշեալ քահանայի առաջնորդութեամբ ներկայանում էին սրբազանին։ Իսկ մենք «Մնաս բարեաւ» ասելով հեռացանք վանքից քաղցր և միանգամայն դառն տպաւորութեամբ։

Յ. Տ. Բարսեղեանց

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ

—

22 օգոստոսի

Կեանքը միակերպանի դրեթէ տխուր է անցնում ամարանոցում։ Որքան գեղեցիկ լինի բնութիւնը, որքան հրապուրիչ լինի նրա պատկերը, այնու ամենայնիւ քաղաքի աղմկալի կեանքից երկար ժամանակ հեռու մնալը անկարելի է դառնում։ Չը նայելով որ Դարաչիչագը ամառվայ կեցութեան համար մի պատուական անկիւն է, այնու ամենայնիւ, ծառայողները շատ սակաւ բացառութեամբ համաձայնվում են Երևանի անտանելի շոգումը մնալ, քան թէ այստեղ։ Ինչու, անշուշտ կը հարցանի հետաքրքիր ընթերցողը. ահա պատասխանս։ Նախ՝ կենսական պէտքերը այստեղ համեմատաբար աւելի թանգ գնով են ծախվում, քան թէ Երևանում։ Բացի դրանից, պէտք է ուշադրութիւն դարձնել բնակարանների անյարմարութեան վրա, որոնց մէջ կենում են հասարակ և միջին դասակարգի ծառայողները։ Երկու մեծ տներ կան, որոնց կազարմա անուն են տալիս, դրանց մէջ բնակվում են համումնացած ծառայողները. թէ որքան խոնաւ են այդ տները և անյարմար կեցութեան համար՝ աննկարագրելի է։ Վերջին օրերում մի գրագիր ձեռքը թուլացածի նման էր զգում, ասում են հիւանդութիւնը խոնաւութիւնից էր։ Այդ դէպքը առիթ տուեց պ. Շալիկով նահանգապետին ուշադրութիւն դարձնել ծառայողների դրութեան վրա։ Առհասարակ պ. նահանգապետը մի առանձին հոգացողութիւն ունի դէպի ամեն մի անձն ինչ դասակարգի նա պատկանէր։ Այն ծառայողները աւելի դժուարութիւն են կրում, որոնք ընտանիքի տէր են։ Հինգ վեց հոգուց բաղկացած մի գերդաստան թափված են մի սենեակի մէջ. բաւական է ամենափոքր անձրև, որը այստեղ յաճախակի է կրկնվում, պէտք է մահճակալը մի անկիւնից միւսը տեղափոխել անձրևի կաթոցքից պատսպարվելու համար։ Կան մի քանի յարմար բնակարաններ, որոնք միայն բախտաւոր արարածներին են պատկանում։

Աստուածածնի տօնի օրը այստեղ բաւական ուրախ անցաւ, ամբողջ հայ հասարակութիւնը լցուած էր եկեղեցին։ Պատարագից յետոյ մատաղ վայելեցին. հասարակութեան մէջ աչքի էին ընկնում թաթար և ռուս անձնաւորութիւններ։ Առհասարակ Դարաչիչագ տեղափոխվող հայերի վրա ես մի օտարոտի երևոյթ եմ նշմարում։ Այն հայը, որ քաղաքում տարիներով եկեղեցու երես չէ տեսնում, այստեղ կարելի է նրան ամեն կիրակի տեսնել Աստուածածնայ տաճարի մէջ աղօթելիս. չը գիտեմ Բագրատունեաց ժամանակից մնացած պանծալի հնութիւններն են քաշում դէպի իրենց, թէ հայի սրտում նորից լոյս տալ է ուզում կրօնի մարած ճրագը։

Փօստը այստեղ երեք անգամ է ստացվում շաբաթը. «Մշակ» լրագիրը ստացվում է մօտաւորապէս 15 օրինակ և մի քանի օրինակ «Փորձ»։ Ահա երեք ամիս է բացի այդ լրագիրները մեր ձեռքը ուրիշ հայկական թերթ չէ ընկնում։ «Մշակի» ջանքը միութեան կապ հաստատել լուսաւորչական և միւս հայերի մէջ մեծ համակրութեամբ է ընդունվում. ինչ կուզեն թող ասեն, ինչ կուզեն թող գրեն «Մշակի» ուղղութեան և ընթացքի դէմ, այդ մեզ փոյթ չէ, մամուլների յարձակմունքը թող չը վհատեցնէ այդ լրագրի յարգելի խմբագրին։ «Մշակը» վայելում է մեր քաղաքացոց ընդհանուրի յարգանքը և համակրութիւնը։ Այսօր Երևանում մօտաւորապէս 100 օրինակ է ստացվում «Մշակը» այդ երևոյթը ևս, կարծում եմ, կարող՞ է մասամբ ապացոյց լինել մեր խօսքերին։

Ներսէս պատրիարքի թունաւորվելու լուրը, որքան սաստիկ դրդեց տեղոյս հայերին, այնքան աւելի ուրախացան երբ տեսան, թէ իրանց սիրելի պատրիարքը ազատվել է մահից։ Ախ, ինչու մեր պատմութեան մէջ մեծ անուններ են ստանում առհասարակ Ներսէսները. այսուհետև պատրիարք, կաթողիկոս ընտրելու ժամանակ, պէտք է անշուշտ Ներսէս անուանել որանց։

Կարծես դժուարանում եմ վերջացնել նամակս առանց մի ակնարկ ձգելու այստեղ գտնվող հնութիւնների վրա։ Կանցնեն մի քանի տասնեակ տարիներ, և այս հնութիւնները, որոնք եւրօպացուն ես զարմացնում են, գուցէ դրանց հետքերը չը մնան. հայեր, ձեր քաղաքական կեանքը մեռաւ, գէթ աշխատեցէք այդ կորուսեալ փառաց վերջին փշրանքը ազատել ժամանակի աւերող ուժի ձեռքից։

Օգոստոսի 22-ին գիշերը ձիւն եկաւ այստեղ. եղանակը այստեղ ցուրտ է, ոչ թէ ձմրան հագուստի մէջ ենք, այլ մի քանի տեղեր վառվում են վառարաններ։ Անձրևը շատ շատ է տեղում. մերձակայ գիւղերում դեռ վերջացած չէ ցորենի ծեծելը։ Բերքը ցորենի այս կողմերում շատ լաւ է. կարկուտը շատ քիչ վնաս տուեց Դարաչիչագի և Մաքրավանք գիւղերի բնակիչներին։

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

26 օգոստոսի

Կեցցէ նուխի և անշարժութիւն, կեցցեն նուխեցիք, որովհետև չորս անգամ ժողովի հրաւիրվեցան, 100-ի չափ անձինք հրաւիրաթուղթ ստացան, բայց 10-ի չափ հոգիք չը ներկայացան, որ գոնէ մի անգամ ժողով կայանայ։ Ինչու։ Որովհետև նախօրօք իմացան, որ նրանցից անցեալ տարվայ ապառիկները պիտի պահանջեն, որ ուսումնարանի պարտքերը վճարեն, դեռ նոր ուսուցիչներ բերել տալու և նրանց վճարելու ցաւը մի կողմ։

Կեցցէ հոգ. սինօդ և անշարժութիւն, որ հակողի դէրը վերցրած ամեն տեղ ցոյց է տալիս թուլութիւն և անհոգութիւն։ Բաւական չէ որ մարդ Նուխում պիտի ամեն քայլափոխում դպրոցի վերաբերութեամբ կուէ ժողովրդի հազար ու մի արգելքների, խոչընդոտների դէմ, բաւական չէ որ մարդ պիտի գլուխ կոտրէ այս աստիճանի մնացած մի քաղաքի իւրաքանչիւր հասարակական գործում կրած նեղութիւններից, բաւական չէ ժողովրդի սառնասրտութիւնը և անհոգութիւնը, դեռ ևս պիտի հոգևոր սինօդին էլ հասկացնել, խնդրել, պաղատել, որ նա իր օրինակով աւելի չը քաջալերէ ժողովրդի սառնասրտութիւնը և անհոգութիւնը. նրան խնդիրք է ուղարկված, որ այս ինչ, այն ինչ եկեղեցական արդիւնքներից հոգ. դպրոցի համար մասն և բաժին հանվի, որովհետև նա առանց այդպիսի դրութիւն ունենալ չէ կարողանում — այս է եօթը ամիս է գնում դեռ հոգ. սինօդի կողմից մի պատասխան չը կայ։

Կեցցեն մեր աղաները, որոնք իրենց անձնական շահերի համար՝ նստած բալկօններում ժամերով կարող են սպառնալիքներ, գայլի աւետարաններ, պրչաւոր սուր ու մուր թափել իրանց առաջ կուչ եկած, ձեռքերը խաչած, գլխաբաց կանգնած խեղճ գիւղացիների գլխին, իսկ մի ժամ չեն բարեհաճի իրենց քաղաքի թշուառ դպրոցի վիճակով հետաքրքրվել, աղքատ ու որբ զաւակներին մի կտոր հացի տէր անելու համար բոլէական հայրական խնամք ունենալ։

Կեցցեն մեր հարուստ վաճառականները, որոնք իրենց որդկերանց Մոսկվա, Թիֆլիս ուղարկած, խղճերը հանգիստ ու արդար ամեն բան կատարած են համարում և որբերի վիճակով հետաքրքրվողին ծաղրում, իրենց մարդախաբէութիւնը և մարդագայլութիւնը շարունակում։

Կեցցեն և մեր քահանաները, որոնք ուրիշին ուսուցանելու, կրթելու, հասկացնելու տեղ, իրանք ուսման և կրթութեան կարօտ են, նոյնպէս և վարդապետը, որ իր ճարտար քարոզութիւններով նուխեցոց բոլորի սառած ու քարացած սրտերը այսպէս տաքացրել, վառել է դէպի ամեն մի բարի գործ։

Նամակս վերջացնում եմ մի քանի լուրերով։

Ամսոյս 20-ին գաւառական դպրոցում ժողով կար չորրորդ դասատուն բանալու մասին։ Թէպէտ ժողովականների թիւը քիչ էր, այնու ամենայնիւ վճռվեցաւ տարեկան 8 ր. վճարի վրա այսուհետև 3 ր. էլ աւելացնել և դասատունը բանալ սեպտեմբերի սկզբից։ Տիկին Մարխոխինը այս մասին նոյն օրը հեռագրեց նահանգապետին, որովհետև սրա ցանկութեան համեմատ էր դիրեկտօրը բանալու թոյլտուութիւնը տուել։ Այստեղ էլ հայերից ընդամենը 2 հոգի էին ժողովին ներկայ։ Մեծամասնութիւնը թուրքերն էին կազմում։

Օրերումս հասաւ այստեղ լուսանկար Ա. Ս. Բոյնովը։ Սա մտադիր է մի ամսաչափ այստեղ մնալ և այս կողմերի հնութիւնների պատկերները վերցնել։ Սրանք թէև ճարտարապետական կողմից նշանաւոր չեն, բայց նշանաւոր են իրենց հնութեամբ և աւանդութիւններով։ Այս հնութիւնների մի մասի նկարագրութիւնը արդէն արել է պ. Ս. Տէր-Սարգսեանը, միւս որս չը շրջած հնութիւնների նկարագրութեամբ էլ այսօր պարապում է Յ. Խոջամիրեանցը։ Այս նկարագրութիւնն և աւանդութիւնները պիտի բաւական լրացնեն պ. Բոյնովի գործը, և հետևապէս մի փոքրիկ ծանօթութիւն տուած լինեն մինչև այժմ անծանօթ մնացած Աղուանից աշխարհի հնութիւնների մասին։

Մի շաբաթից աւելի է, ինչոր անձրևը սկսեց և չէ կամենում կտրվել։ Իզուր չեն այստեղ անձրևի համար ասում՝ «չի գալ, չի գալ կը հորացնի՝ հէնց որ կը գայ՝ կը փտեցնի»։

Այս տարուայ խաղողի այգիները միւս տարիներից աւելի լաւ են, թէպէտ և թոզը բաւական այգիներ փչացրել է։

Զ.